ՄԱՐԻԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ
Մարքեթինգ, բակալավրիատ,
3-րդ կուրս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր. *դեղագործության ոլորտ, շուկա, դեղարտադրողներ, արտահանում, հիմնախնդիրներ*

Պարզելու համար, թե ինչ հիմնախնդիրներ են առկա ՀՀ դեղագործության ոլորտում, հոդվածում դիտարկել ենք դեղագործական շուկայի իրավիճակը, մասնակիցներին, դեղագործական արտադրանքի արտահանման, ներմուծման ծավալները, շարժընթացը, աշխարհագրությունը: Ուսումնասիրել ենք նաև դեղագործական արտադրանքի ներքին և արտաքին շուկա մղման գործընթացն ու խոչընդոտները: Ուսումնասիրության արդյունքում բացահայտել ենք մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են հայրենական արտադրանքի ճանաչելիությունը և, հետևաբար, սպառումն արտասահմանում:

Հայաստանի Հանրապետության արդյունաբերության դեղագործական ճյուղը դասվում է ժամանակակից տնտեսության առավել բարձր տեխնոլոգիական և գիտատար ոլորտների շարքում, որը տնտեսության զարգացման արդի փուլում՝ որոշակի պայմանների առկայության դեպքում, կարող է դառնալ մեր երկրի ինովացիոն զարգացման շարժիչ ուժը: Դեղագործությունը նաև պետությունների անվտանգության համակարգի բաղադրիչը կազմող ճյուղերից է: Արտասահմանյան գրականության ուսումնասիրությունը թույլ տվեց բացահայտել դեղագործական ոլորտի առանձնահատկությունները, իսկ հայրենական գրականության և ՀՀ օրենսդրության ու վիճակագրության ուսումնասիրությունը՝ ՀՀ դեղագործական ոլորտի զարգացման մակարդակը, ինչպես նաև հեռանկարները: Մեթոդաբանության հիմքում գիտական հետազոտությունների քանակական և որակական, մասնավորապես՝ համադրման, գրաֆիկական և տնտեսավիճակագրական մեթոդներն են:

Դեղագործությունը Հայաստանի ամենաարագ աճող արտահանող ոլորտներից է: Այն նաև միակ ոլորտն է, որտեղ աճը վերջին տարիներին չափազանց կայուն է: Արտահանումը կազմում է ոլորտի թողարկման 57%-ը, իսկ արտահանման տարեկան միջին աճը (սկսած 2003 թ.-ից մինչև ճգնաժամային 2008 թ.-ը)՝ 24%[1]: Ճգնաժամից հետո էլ ճյուղը զարգացման բարձր տեմպեր է գրանցվել, թեև հենց այդ տարիներին ոլորտում 15-17% կայուն աճ է արձանագրվել: Այժմ դեռ չի վերականգնվել ոլորտի աճի նախաճգնաժամային մակարդակը: Ամեն դեպքում, կարող ենք ասել, որ դեղագործության ոլորտը Հայաստանի ամենադինամիկ աճող ճյուղերից մեկն է և ունի զարգացման միտումներ:

---

[1] Արդյունաբերական քաղաքականությունը որպես երկրի տնտեսության մրցունակության բարձրացման միջոց/ Ծրագրի գիտական ղեկավար՝ Մ.Ս. Մելքումյան; Կատարողներ՝ Ա.Վ. Քալանթարյան, Ֆ.Ֆ. Բահարյան, Մ.Ա. Ավետիսյան, Հ.Ժ. Հովակիմյան. Եր.: «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014, էջ 48-74 էջ:

Հասկանալու համար, թե արտահանման ինչ ներուժ ունենք դեղագործական ոլորտում, նախևառաջ, անհրաժեշտ է իմանալ, թե ովքեր են զբաղվում դեղերի արտադրությամբ և արտահանմամբ: 2018 թ.-ին ՀՀ-ում գործող հայրենական դեղարտադրողներն են Ալֆա Ֆարմ, Ա. Մնջոյանի անվ. նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ, Արսեմի, Արփիմեդ, Արմենիկում+, Երևանի քիմիադեղագործական ֆիրմա, Էսկուլապ, Լիկվոր, Հագենաս, Մեդիքալ հորիզոն, ՆՕԿԻ, Ֆարմատեք ընկերությունները[1]: Մեր դեղագործական շուկայում, բացի հայրենական դեղարտադրողներից, մասնակցում են նաև օտարերկրյա դեղարտադրողների հայաստանյան ներկայացուցչություններ, որոնք են Բեռլին- Խեմի, Գեդեոն Ռիխտեր, Գլաքսո Սմիթ Կլայն էքսպորտ լիմիթիդ, ԷԳԻՍ, Լե լաբողատուար սեղվիե, ԿՌԿԱ, Հոֆֆման-Լյուա Ռոշե, Նիկոմեդ Ավստրիա, Ջոնսոն ընդ Ջոնսոն, Սանտեն, ՖԻԿ մեդիկալ ընկերությունները[2]:

Մինչ պարզելը, թե որ ուղղությամբ է դեղագործական արտադրանքի արտահանումն ավելի շատ կամ քիչ եղել վերջին տարիներին, նախ՝ դիտարկենք ՀՀ-ից դեղագործական արտադրանքի առևտրի ընդհանուր ծավալը 2017-2018 թվականների համար՝ հիմնվելով ՀՀ մաքսային ծառայության հրապարակած պաշտոնական վիճակագրական տվյալների վրա: Թեև անհրաժեշտ է նշել, որ ՀՀ-ում արտադրության կազմակերպման համար հումքը ներկրվում է եվրոպական և հնդկական ընկերություններից:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրն ԱՏԳ ԱԱ-ի ապրանքախմբերով [3]

ԱՏԳ ԱԱ-ի կոդը	Ապրանքի անվանումը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ (հազ. ԱՄՆ դոլար)				
		Չ/մ	2017 թ.		2018 թ.	
			Քանակ	Մ. արժեք	Քանակ	Մ. արժեք
2936	Վիտամիններ և դրանց ածանցյալներ	կգ	13.8	0.3	36.7	1.5
2941	Հակաբիոտիկներ	կգ	0.0	0.0	126.2	8.0
3001	Գեղձ և այլ օրգան՝ օրգանաբուժության համար	կգ	124.4	100.4	6.5	0.1
3002	Արյուն, հակաշիճուկ, պատվաստանյութ, աճեցրած մանրէներ	տոննա	72.6	8622.4	22.4	8733.5
3004	Դեղամիջոցներ՝ կշռածրարված	տոննա	3020.5	13587.2	2713.3	11836.2
3005	Բամբակ, թանզիֆ, վիրակապ և նման միջոցներ	տոննա	115.8	640.2	129.9	720.7
3006	Այլ դեղագործական ապրանքներ	կգ	587.1	61.9	230.7	53.9

Բոլոր տեսակի դեղագործական արտադրանքների արտահանման ծավալը նվազել է 2018 թվականին 2017 թվականի համեմատությամբ 9359754.97 հազար ԱՄՆ դոլարով:

---

[1] http://pharm.am/index.php/am/2015-04-06-15-33-09

[2] http://pharm.am/index.php/am/2015-04-06-15-29-06/653-2015-05-06-16-37-04

[3] Աղյուսակը կազմել է հեղինակը, հիմք՝ http://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIImportStatistics



***Գծապատկեր** 1. Դեղագործական արտադրանքի արտահանման ընդհանուր ծավալը 2017-2018 թվականներին*[1]

Այժմ ներկայացնենք նաև 2017-2018 թթ.-ի արտահանման ծավալները երկիր-ապրանք կտրվածքով: Եթե դեռ 2016 թ.-ին Հայաստանում արտադրվող դեղերը հիմնականում արտահանվում էին Իրաք, Մոլդովա, Ղազախստան, Տաջիկստան, Ռուսաստանի Դաշնություն, Լատվիա, Վրաստան, Ուզբեկստան, Բելառուս, Ուկրաինա, Եմեն և Վիետնամ, ապա 2017 թվականին առաջին տեղում է Վրաստանը, նրան հաջորդում են Ռուսաստանի Դաշնությունը, ապա Իրաքը: Սակայն փաստենք, որ 2018 թ.-ին պատկերը փոխվել է: Առաջին երկու տեղում են մնացել Վրաստանը և Ռուսաստանի Դաշնությունը, սակայն դեպի Իրաք դեղորայքի արտահանման ծավալները կտրուկ նվազել են. 2017 թ.-ի 1507539.6 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ 5796 կիլոգրամ դեղորայքի փոխարեն 2018 թ.-ին արտահանվել է ընդամենը 2385 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ 225 կիլոգրամ արտադրանք: Արտահանման ծավալների կտրուկ նվազում է նկատվել նաև դեպի Իրանի Իսլամական հանրապետություն, Եմեն, Լիտվա, Հունգարիա: Նկատենք նաև, որ, թեև Վրաստանը և Ռուսաստանի Դաշնությունը մեր արտահանման մեջ զբաղեցնում են համապատասխանաբար առաջին և երկրորդ տեղերը, սակայն դեպի այդ երկրներ 2018-ին 2017-ի համեմատ նկատելի նվազում է գրանցվել:

Որոշ ուղղություններով 2018 թվականին 2017-ի համեմատությամբ տեղի է ունեցել արտահանման դադարում: Այդ ուղղություններից է Հնդկաստանը, ուր արտահանել ենք արյուն, հակաշիճուկ, պատվաստանյութ, աճեցրած մանրէներ:

2017 թվականին դեպի Վատիկան քաղաք-պետություն, ԱՄՆ-ի Վիրջինյան կղզիներ, Չինաստան, Ֆինլանդիա շատ փոքր քանակով արտահանվել են դեղամիջոցներ՝ կշռածրարած, հավանաբար՝ նոր շուկա ստեղծելու նպատակով: Այս ուղղություններով 2018 թ.-ին ընդհանրապես արտահանում չի գրանցվել, ինչը կարող է նշանակել, որ մեր արտադրությունն իր տեղը չգտավ այս երկրների դեղագործական շուկաներում:

[1] Գծապատկերը կազմել է հեղինակը, հիմք՝ http://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIImportStatistics

Արտահանման աշխարհագրությունը 2018 թվականին 2017-ի համեմատությամբ ընդլայնվել է դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ, Բահրեյն, Թուրքմենստան, Իսպանիա, Հունաստան, Շվեյցարիա: Դեպի որոշ երկրներ արտահանվող մի քանի անուն դեղորայքին ավելացել են այլ դեղամիջոցներ, օրինակ՝ դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն, Գերմանիա, Եմեն, Մոլդովայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն:

Հատկանշական է, որ 2018 թվականին սկսել ենք արտահանել հակաբիոտիկներ դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն և Եմեն:

Նշենք, որ արտահանող հիմնական ընկերություններն են «Արփիմեդը», «Լիկվորը», «Ֆարմատեքը» և Երևանի քիմիադեղագործական գործարանը:

Դեղագործական ոլորտում ներմուծումը գերազանցում է արտահանմանը:

Ներմուծվող դեղերի և դեղանյութերի որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետությունում ընդունված դեղագրքերի և (կամ) տեխնիկական պայմանների պահանջներին: Բացի այդ, դեղանյութերի ներմուծման համար անհրաժեշտ են դեղանյութերի արտադրության պայմանները հավաստող փաստաթղթեր (պատշաճ արտադրական գործունեության) հավաստագիր և (կամ) արտադրության լիցենզիա և (կամ) որակի հավաստագիր՝ տրված արտադրողի կողմից):

Հայաստանի Հանրապետություն ներմուծման պահին դեղերի և (կամ) դեղանյութերի պիտանիության մնացած ժամկետը պետք է լինի նվազագույնը մեկ տարի:

ՀՀ տարածք կարող են ներմուծվել միայն Հայաստանում գրանցված դեղերը, բացառությամբ՝[1]

- նախակլինիկական և կլինիկական հետազոտությունների համար նախատեսված նմուշների.
- Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման համար նախատեսված նմուշների.
- ցուցահանդեսների, գիտաժողովների կամ այլ նմանատիպ միջոցառումների համար նախատեսված, առանց վաճառքի իրավունքի ներմուծվող դեղերի նմուշների.
- աղետների, համաճարակների և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև մարդասիրական օգնության կարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դեղերի.
- փաթեթավորման նպատակով ներմուծվող այն դեղերը, որոնք անցել են արտադրության բոլոր փուլերով՝ բացառությամբ փաթեթավորումը և մակնշումը (փաթեթավորումը վերջնական սպառման նպատակով ավարտված չէ) և որոնց վերջնական արտադրանքը Հայաստանի Հանրապետությունում գրանցված է:

Դեղամիջոցները ՀՀ ներմուծման կառուցվածքում արժեքով 6-րդն են՝ գազից, նավթամթերքից, ոսկուց ու ադամանդից հետո: ՀՀ-ում դեղորայքի ներմուծման համար գործում է զրոյական մաքսատուրք, իսկ ԵԱՏՄ-ում՝ 8-12.5%: Քանի որ դեղորայքի մեծ մասը ներմուծվում է եվրոպական երկրներից (Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Իտալիա) և ԱՄՆ-ից, ակնհայտ է, որ

[1] http://www.armenianlaw.com/hy/vvoz_i_vyvoz_lekarstvo_iz_armenii_import_export/

դեղորայքը կարող էր թանկանալ նվազագույնը 8%-ով: Սակայն, հարկ է նշել, որ դեղորայքի ներմուծման մաքսատուրքերի 0% դրույքաչափերը փոփոխության կենթարկվեն 2021 թ.՝ 2%, և 2022 թ. կկիրառվեն ԵԱՏՄ դրույքաչափերը[1]:

ՀՀ-ում դեղարտադրությունը գրեթե բացառապես սահմանափակվում է ջեներիկ դեղագործական արտադրանքի արտադրությամբ, որտեղ ստեղծվող ավելացված արժեքը և ստացվող եկամուտները, համեմատած նորարարական մշակումների, բազմապատիկ փոքր են: Արդյունքում դեղարտադրողները կաշկանդված են մրցել առավելաբար գնի միջոցով, ինչը, իր հերթին, կրճատում է նոր դեղամիջոցների մշակման համար հասանելի ֆինանսական ռեսուրսների ծավալը:

Դեղագործական շուկան ունի մեկ կարևոր առանձնահատկություն. Դեղերը փորձարկման փուլ անցնելուց հետո (հաճախ նաև առանց փորձարկման, քանի որ դա բավական թանկարժեք և երկարաժամկետ գործընթաց է) մուտք են գործում շուկա, կիրառվում մարդկանց կողմից որոշ ժամանակահատված, որի ընթացքում բացահայտվում եմ դրանց կողմնակի անցանկալի ազդեցությունները, ինչից հետո հիմնականում հանվում են կիրառությունից և փոխարինվում նոր, ավելի կատարելագործված տեսակներով: Սա մշտական գործընթաց է: Ուստի նոր դեղորայքի մուտքը շուկա պետք իրականանա նվազագույն խոչընդոտներով: Ասվածն իհարկե չի վերաբերում փորձարկման փուլի շրջանցմանը կամ հեշտացմանը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում նոյեմբերի 29-ին որոշում ընդունվեց դեղագործական արտադրանքի շուկա մուտքի գործընթացի հեշտացման և արագացման վերաբերյալ: Հուսանք՝ այդպիսի որոշում կընդունվի նաև Հայաստանում:

Եզրակացություն: Մեր կատարած աշխատանքի արդյունքում եկել ենք այն եզրակացության, որ Հայաստանում դեղագործական արդյունաբերության հիմնախնդիրները պայմանավորված են հետևյալ հանգամանքներով.

- ներքին շուկան փոքր է, իսկ արտաքին շուկան առավելաբար սահմանափակվում է ԱՊՀ երկրներով, քանի որ հայկական դեղարտադրողների մրցունակության մակարդակը ցածր է,
- դեղագործության ոլորտում միջճյուղային և միջֆիրմային կապերը թույլ են,
- հետազոտությունների և զարգացման վրա կատարվող ծախսերն աննշան են,
- արտահանման մարքեթինգի կարողությունները սահմանափակ են:

ՀՀ-ում դեղարտադրության բնագավառում հիմնական խնդիրները ֆինանսական ներդրումներն են, ինչպես նաև որակավորված մասնագետների պակասը:

Հայաստանից արտահանումը կատարվում է արտահանման հավաստագրով, որի առկայությունը պարտադիր չէ: Այն տրվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից Հայաստանում հսկվող դեղամիջոցի յուրաքանչյուր տեսակի համար: Հավաստագիր ստանալու համար արտահանողը հայտ է ներկայացնում նախարարություն: 10 օրվա ընթացքում նախարարու-

[1] Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագրի 4-րդ հավելվածով տրված է այն ապրանքների ցանկը, որոնց գծով պահպանվելու են ՀՀ-ում գործող սակագները, ինչպես նաև նշված է այն ժամանակահատվածը, որի ավարտից հետո կկիրառվեն ԵԱՏՄ սակագները:

թյան «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնը» փաստաթղթային մեթոդներով կատարում է դեղորայքի որակի ցուցանիշների ստուգում, որի գինը կազմում է 11.000 դրամ, և նախարարությունը տալիս է հավաստագիրը: Հավաստագիրը տրվում է մինչև 1 տարի ժամկետով և անվճար:

ՀՀ-ում դեղարտադրության բնագավառում հիմնական խնդիրները ֆինանսական ներդրումներն են, ինչպես նաև որակավորված մասնագետների պակասը: Այս հանգամանքներից են կախված արտահանման հնարավորություններն ու նոր շուկաների նվաճումը:

Արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին թվաքանակի աճ է տեղի ունեցել 2018 թ.-ին՝ 2017-ի համեմատությամբ, սակայն դեղագործական արտադրանքի արտադրության ծավալը նվազել է, քանի որ աշխատանքի արտադրողականությունը նվազել է 8.6%-ով: Այս իրավիճակի առաջացման պատճառը, ըստ «Արփիմեդ» ընկերության, կարող է լինել աշխատուժի բարձր արժեքը: Արտահանման առավել կարևոր պատճառ է մեր դեղարտադրության մարքեթինգի անհրաժեշտությունը, որը, սակայն, թանկարժեք է, ինչը ոչ մրցունակ կարող է դարձնել մեր արտադրանքն արտաքին շուկաներում:

Փաստերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ապահովված է կեղծ և որակի չափանիշներին չհամապատասխանող դեղորայքի՝ օրինական ճանապարհով ներկրումից հանրապետության տարածք, իսկ եթե այդպիսիք ներկրվել են օրենքի շրջանցման ճանապարհով, ապա ՀՀ-ում առկա է գործուն համակարգ դրանց հայտնաբերման և շրջանառության դադարեցման ուղղությամբ:

Առաջարկություններ: Դեղագործության ոլորտում նշանակալի աճի ապահովման համար անհրաժեշտ է.

- Պետության ակտիվ միջամտությունը, որը ենթադրում է պետական գնումների լծակի արդյունավետ կիրառում: Տեղական արտադրողների հետ մատակարարումների մինչև յոթնամյա պայմանագրերի կնքում, ինչը զգալի ֆինանսական կայունություն կհաղորդի ձեռնարկություններին: Տեղական արտադրողներին օրենսդրորեն երաշխավորված նախապատվությունների տրամադրում:
- Բարձրակարգ կադրերի ապահովում:
- Հանրային առողջապահական ծրագրերի ընդլայնում և պարտադիր բուժապահովագրության համակարգի ներդրում:
- Բժշկական զբոսաշրջության խթանում:
- Երկարաժամկետ ֆինանսավորման կառուցակարգերի ձևավորում:
- Արտադրության տեխնոլոգիական արդիականացում:
- Մարքեթինգի կառավարման հմտությունների բարելավում:
- Հումքի տեղական արտադրության կազմակերպում (ակտիվ դեղագործական բաղադրիչների արտադրության հիմնում Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի հենքի վրա):
- Բուսական ծագման դեղերի արտադրության զարգացում:

Դեղերի ֆիզիկական մատչելիությանը խոչընդոտող գրանցումների միջև խզում չառաջացնելու նպատակով հրատապ անհրաժեշտություն է դառնում

վերագրանցման և հավաստագրերի ժամկետի երկարացման համակարգի ներդրումը:

Արտահանման ամենակարևոր բարդություններից է այն, որ ԱՄՆ-ում, Եվրոպայում և այլ երկրներում դեղերը շուկա մուտք են գործում իրենց ազդող նյութին համապատասխան անվամբ, իսկ ՀՀ-ում և նախկին խորհրդային տարածքում դեղերը տարբեր անուններ կարող են ունենալ: Ուստի շատ հաճախ մեր տեղական դեղերը չեն ճանաչվում և, հետևաբար, չեն վաճառվում դրսում: Սա կարող է լրացուցիչ պատճառ դառնալ մեր դեղարտադրության ոլորտի արտադրանքն ավելի շատ դեպի հարևան, նախկին սոցիալիստական հատվածի երկրների շուկաներ շարժվելու՝ այնտեղ սպառում գտնելու համար:

Գրականություն

1. ՀՀ կառավարության որոշումը ՀՀ տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և ՀՀ տարածքից արտահանելու, ներմուծման կամ արտահանման նպատակով փորձաքննության իրականացման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թ.սեպտեմբերի 20-ի N 581 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին, 28 փետրվարի 2019 թ. N 202-Ն, http://www.arlis.am/Documentview.aspx?DocID=128860
2. Բեռուֆորթ Բ. Լոնգեսթ, Առողջապահական մասնագետները մենեջմենթում, Եր., «Հայաստան», 2009, 464 էջ:
3. Արդյունաբերական քաղաքականությունը որպես երկրի տնտեսության մրցունակության բարձրացման միջոց/ Ծրագրի գիտական ղեկավար՝ Մելքումյան Մ.Ս.; Կատարողներ՝ Քալանթարյան Ա.Վ., Բահարյան Ֆ.Ֆ., Ավետիսյան Մ.Ա., Հովակիմյան Հ.Ժ., Եր., «Տնտեսագետ», 2014:
4. Մարգարյանց Լ., Հայաստանի դեղագործական կլաստերի մրցունակության կառուցումը, Հայաստանի դեղագործության մրցունակություն - Երրորդ միջազգային համաժողովի նյութեր, 2010 թ.:
5. Սարգսյան Ս.Ս., Առողջապահության արդյունաբերացման կառավարման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2014, էջ 21: Պատասխանատու մարմին՝ European Medicines Agnecy:
6. ՀՀ վիճակագրական տեղեկագրեր 2016, 2017, 2018, 2019 թթ.:
7. Положение о порядке ввоза на таможенную территорию таможенного союза лекарственных средств фармацевтических субстаций, http://www.eurasiancommission.org/ru/act/trade/catr /nontariff/Documents/2.14%20-%20lekarstva%20PR.doc
8. http://pharm.am/index.php/am/2015-04-06-15-33-09
9. http://pharm.am/index.php/am/2015-04-06-15-29-06/653-2015-05-06-16-37-04
10. http://www.armenianlaw.com/hy/vvoz_i_vyvoz_lekarstvo_iz_armenii_import_export/

МАРИАННА ТОРОСЯН
Маркетинг, бакалавриат, 3-й курс

ОСОБЕННОСТИ ФАРМАЦЕВТИЧЕСКОГО РЫНКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Ключевые слова: *фармацевтическая отрасль, рынок, производители лекарств, экспорт, проблемы*

С целью выявления проблем в сфере фармацевтики Республики Армения, в статье нами рассмотрено состояние фармацевтического рынка, участников, объемы экспорта, импорта, динамику и географию продукции. Мы изучили также процесс и препятствия на пути вывода фармацевтических продуктов на внутренний и внешний рынки. В результате нашего исследования выявлен ряд проблем, препятствующих узнаваемости отечественных товаров и, как следствие, их потребления за рубежом.

MARIANNA TOROSYAN
3rd year, Bachelor's Degree,
Marketing and Business Organization

FEATURES OF THE PHARMACEUTICAL MARKET OF THE REPUBLIC OF ARMENIA

Keywords. *pharmaceutical sector, market, drug suppliers, export, problems*

To identify the issues exeistent in the sphere of pharmaceuticals of the Republic of Armenia, in the paper we have considered the situation of the pharmaceutical market, the participants, the volumes of export, import of pharmaceutical products, the movement, and the geography. We also studied the process and barriers to the introduction of pharmaceutical products into domestic and foreign markets. As a result of the study, we have revealed several problems that hinder the recognition of domestic products and consequently their consumption abroad.